

Մ.Գ. ԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ОТРАЖЕНИЕ ШОКОВ XX ВЕКА В АРМЯНСКОЙ МЕМУАРИСТИКЕ

Исследуется проблема психологического и сознательного влияния шоков XX века на армянскую мемуаристику. Проведено хронологическое редактирование шоков.

Ключевые слова: мемуаристика, память, шок, психология, сознание.

M.H. HAYRAPETYAN

THE IMPACTS OF THE 20th CENTURY SHOCKS ON ARMENIAN MEMOIR LITERATURE

The issue on psychologic and conscious impacts of the shocks of the 20th century on Armenian memoir literature is investigated. The shocks were chronologically edited.

Keywords: memoir literature, memory, shock, psychology, consciousness.

ՀՏԴ 004:811.19

Հ.Լ. ԶՈՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Դիտարկվում են տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) բնագավառի հասկացությունների անգլերեն անվանումների կիրառությունը հայերեն բանավոր և գրավոր խոսքում: Ցույց են տրվում դրանց հայերեն տարբերակների համարժեքությունը, ստեղծման եղանակները, թարգմանության անհրաժեշտությունը, տարածման ուղիները:

Առանցքային բառեր. փոխառություն, հասկացություն, թարգմանություն, համարժեքություն, ուսուցում:

Քոմպիյութերային և ինտերնետային տեխնոլոգիաների արագ զարգացումը և տարածումը, դրանց կիրառությունը հնարավորություն է տալիս իրագործել մի շարք արտադրական և ստեղծագործական խնդիրներ: Այդ տեխնոլոգիաները արագ ներթափանցել են սովորական մարդու կենցաղը և դարձել նրա առօրյայի անբաժանելի մասը: Այսօր հնարավոր չէ պատկերացնել մեր կյանքն առանց բջջային հեռախոսի, համակարգչի և այլ միջոցների:

ՏՏ ոլորտը ծագել և ձևավորվել է ԱՄՆ-ում, ուստի ոլորտի հասկացությունները նշանակող տերմինները անգլերեն են: Տեղեկատվական տեխնոլոգիաների հետ բառապաշարի մեջ թափանցում են դրանք արտացոլող բառերը: Աշխարհի շատ լեզուներ փոխ են առել ոլորտի տերմինները անգլերենով: Հայերենը նույն-

պես փոխ է առել դրանք, բայց այդ բառերը դեռ չեն դարձել գրական լեզվի միավորներ: Դրանք անգլերենից կատարված փոխառություններ են, որոնց մի մասը դարձել է բառապաշարի գործուն շերտի բառեր և ենթարկվում է հայերենի քերականական կարգերին. ստանում է որոշիչ հոդ, կազմում հոգնակի թիվ, հոլովվում և այլն: Օրինակ՝ վինչեստորը խփել է, տարբեր սայթերում և այլն:

Այսօր լայն գործածություն ունեն *account/ըքաունթ* (անուն-գաղտնաբառ՝ համակարգիչ մտնելու համար), *animator/անիմատոր* (շարժվող պատկերներ ստեղծելու և դիտելու, մուլտֆիլմ նկարելու ծրագիր), *upgrade/ափգրեյդ* (ծրագրի ֆունկցիոնալ նորացում), *update/ափդեյթ* (ծրագրի նորացում), *upload/ափլոդ* (օգտատիրոջ համակարգչից ֆայլի պատճենումը սերվերին), *banner/բաներ* (դրոշ, գովազդ պարունակող նշան), *browser/բրաուզեր* (ֆայլերը դիտելու ծրագիր), *web/ վեբ* (ցանց), *winchester/վինչեստեր* (կոշտ սկավառակ), *gamer/գեյմեր* (համակարգչային խաղեր խաղացող), *download/դաունլոդ* (ինտերնետից պատճենում անձնական համակարգչին), *domain/դոմեն* (մեկ սերվերով ղեկավարվող համակարգիչներ), *internet/ինտերնետ* (համաշխարհային ցանց), *quest/քվեսթ* (համակարգչային խաղ), *click/քլիկ* (մկնիկը սեղմելիս հնչող ձայն), *Log in/լոգին* (համակարգ մտնելու գաղտնաբառ), *multimedia/մուլտիմեդիա* (տեղեկույթի բազմաշերտ տրամադրում՝ տեքստային, ձայնային, գրաֆիկական պատկերներ, անիմացիա, տեսագրություն համակարգչի կամ էլեկտրոնային այլ տեխնիկայի միջոցով), *e-mail, mail/իմեյլ, մեյլ* (էլեկտրոնային փոստ), *pixel/պիքսել* (գունավոր կետերի ամբողջություն, որը տալիս է համակարգչային պատկեր), *plug in/պլագին* (ծրագրային հնարավորությունները մեծացնող մոդուլ), *provider/պրովայդեր* (ինտերնետը հասանելի դարձնող կազմակերպություն) *site/սայթ* (միմյանց հետ փոխկապակցված կայքերի ամբողջություն), *server/սերվեր* (սպասարկիչ, համակարգիչ, որը ղեկավարում է ցանցը), *scanner/ սքաներ* (ծրիչ), *font/ֆոնտ* (տառատեսակ), *hacker/հակեր* (ցանցահեն) և այլն [1]:

SS ղղորտի հասկացություններից շատերը նշանակում են գործողություն, և այդ տրամաբանությամբ հայերենում հանդիպում ենք անգլերեն բառին գումարած –ել(լայքել) ձևը:

Մի առանձին խումբ են կազմում այն հասկացությունները, որոնք հայերենում կազմվում են անել բայի համադրությամբ՝ *copy past անել, screenshot անել, tag անել, hack անել, print անել, scann անել, update անել, upgrade անել, like անել, share անել, post անել, add անել, unfriend անել, enter անել, delete անել, insert անել, save անել, catch up անել* և այլն:

Դեռևս 2011թ. Լեզվի պետական տեսչությունը «Լեզվաշխարհ» ժողովածուում համակարգչային մոտ 30 տերմինի համար առաջարկել է հայերեն տար-

բերակներ՝ adapter/հարմարիչ, administrator/վարիչ, clipboard/սեղմատախտակ, computer/համակարգիչ, copy/պատճենել, desktop/սեղան, display/ցուցադրիչ, folder/պանակ, log in/ներս գրվել, log out/դուրս գրվել, message/ուղերձ, on-line/առցանց, off-line/ անցանց, past/սուսնձել, printer/տպիչ, processor/մշակիչ, provider/տրամադրող, մատուցող, scanner/ծրիչ, server/սպասարկիչ, update/արդիացնել, user name/մուտքանուն, օգտվողի անուն, site/կայք և այլն [2]: Այս ցուցակից կայք և առցանց բառերն են, որ շրջանառվում են ՁԼՄ-ներում, գովազդներում, մնացածը չունեն լայն շրջանառություն: Թերևս դրանք չեն գիտակցվում այնպես, ինչպես որ պետք է գիտակցվեն: Վերը բերված ցուցակի clipboard, desktop, display, log in, log out, on-line, off-line հասկացությունների համար հայերենները ստեղծվել են պատճենումով՝ clipboard (clip՝սեղմիչ+board՝ տախտակ/սեղմատախտակ), ավելի հարմար է ստեղծել տարբերակը, հատկապես որ սարքը զուգորդվում է գրամեքենայի հետ, desktop (desk՝գրասեղան+top՝ վերնամաս), երբ ասում ենք դեսքթոփ, չենք հասկանում սեղան, այլ՝ համակարգչի էկրանը:

Մեր կյանքում մեծ տարածում են ստացել netbook, notebook, laptop, planshet, iPad, ipod սարքավորումները, որոնք տեղեկատվական տարբեր տեխնոլոգիաների հիման վրա են աշխատում: Այս սարքերից որևէ մեկը չունի հայերեն անվանում: Եթե փորձենք պատճենման միջոցով կառուցել անվանումները, ապա netbook-ի համար կունենանք ցանցագիրք, notebook-ի համար՝ նոթագիրք կամ նոթատետր, որը բոլորովին այլ առարկայի անվանում է: Առայժմ այս սարքավորումները շարունակում են անվանվել անգլերեն բառերով:

Տեղեկատվական տեխնոլոգիաների վրա է հիմնված բջջային հեռախոսների աշխատանքը: Ըստ տեխնիկական հնարավորությունների՝ հեռախոսները ստացել են իրենց անվանումները՝ mobile, smartphone, iphone: Ինչպես տեսնում եք, այստեղ էլ անվանումները անգլերեն են: Smartphone-ի համար առաջարկվել է խելախոս բառը, որը կարծես թե ընկալվել է հանրության կողմից:

Բջջային հեռախոսները, տեղեկատվական տեխնոլոգիաների շնորհիվ, հնարավորություն են տալիս, բացի իրենց հիմնական նշանակությունից, կիրառել դրանք այլ նպատակների համար ևս՝ մուտք գործել համացանց, ձայնագրել և լսել երաժշտություն, բանավոր խոսք, լուսանկարել և այլն: Այսինքն՝ հեռախոսը դարձել է բազմագործառույթ սարք: Բջջային հեռախոսի նկարելու հնարավորությունը մեծ մասսայականություն է վայելում: Ճամփորդելիս, չունենալով լուսանկարչական ապարատ, մարդիկ օգտագործում են հեռախոսի նկարելու հնարավորությունը: Այդպիսի նկարները ստացել են selfie անվանումը, որը բառացի նշանակում է ինքնանկար: Ինքնանկարը այլ բնագավառի տերմին է և այլ

բովանդակություն ունի: Այսօր շրջանառվում է ինքնուկ ձևը, որն առայժմ պաշտոնական ճանաչում չի ստացել:

Համակարգչային վիրուսները նույնպես չունեն հայերեն անվանումներ՝ անգլերեն են (backdoor, fishing) կամ ռուսերեն (черви, троянцы):

Եզրակացություն: SS ոլորտի հասկացությունների հայերեն թարգմանության, ուսուցման, տարածման գործում կարևոր է ոլորտի մասնագետների դերը: Նրանք են ուսուցանում ուսանողներին մասնագիտական գիտելիքը և համապատասխան հասկացություններն ու տերմինները: Ոլորտի տերմինների հայերենը ստեղծելու համար ցանկալի է մասնագետի և լեզվաբանի համագործակցությունը, ինչը կնպաստի լիարժեք բառակազմ ունենալուն: Այսօր մենք չունենք SS ոլորտի հասկացությունների բառարան, իսկ շատ լեզուներ ունեն նույնիսկ մի քանի բառարան: Բառարանի ստեղծումը արդիական խնդիր է, որը, հուսով ենք, կհաջողվի՝ հաշվի առնելով հայերենի տերմինակերտման հարուստ փորձը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Зейденберг В.К., Зимарев А.Н., Степанов А.Н., Масловский Е.К.** Англо-русский словарь по вычислительной технике. – М.: Русский язык, 1989.
2. **Լեզվաշխարհ:** Լեզվի հիմնախնդիրներին նվիրված ժողովածու/ՀՀ ԿԳՆ լեզվի պետ. տեսչություն.-Եր.: «Պոլիգրաֆբիզնես» ՍՊԸ, 2011:

Ր.Լ. ՅՐՅԱՆ

НАЗВАНИЯ ПОНЯТИЙ В СФЕРЕ ИНФОРМАЦИОННЫХ ТЕХНОЛОГИЙ В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Рассматриваются вопросы использования в армянской устной и письменной речи англоязычных названий понятий в сфере информационных технологий (ИТ). Показаны равноценность их армянских вариантов, способы создания, необходимость перевода, пути их распространения.

Ключевые слова: заимствование, понятие, перевод, равноценность, обучение.

H.L. ZORYAN

NAMES OF DEFINITIONS IN THE FIELD OF INFORMATION TECHNOLOGIES IN ARMENIAN

In this article, the usage of the English words in the information technologies (IT) field in the Armenian oral and written speech, the adequacy of their Armenian translation, the way of creating them, the need for translating them, the way to spread them, are considered.

Keywords: borrowing, definition, translation, adequacy, teaching.